

Երևանի Օրհուս կենտրոնների 2010թ. գործունեության հաշվետվություն

(հունվար-հունիս)

2010թ. Երևանի Օրհուս կենտրոնը սկսել է աշխատել համաձայն կենտրոնի կանոնակարգի, հիմք ընդունելով Փոխըմբռման հուշագիրը և Օրհուս կենտրոնների ռազմավարական գործողությունների պլանի (2009-14) իրագործման համար մշակված ճանապարհային քարտեզը: Կենտրոնի աշխատանքները կազմակերպվել է ըստ համակարգողների կողմից մշակված աշխատանքային պլան-ժամանակացույցի:

Կենտրոնի գործունեությունը նպաստում է Հայաստանում Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրականացմանը:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը հասարակայնությանը տրամադրվում է ըստ պահանջի, www.aarhus.am կայքի միջոցով և տարածվում է էլեկտրոնային ցանցերով: Կենտրոնը իրականացնում է շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում, բազայավորում, տրամադրում ըստ պահանջի և տարածում շահագրգիռ կողմերի միջև: Էկոլոգիական տեղեկատվությունը հասարակայնությանը առավել մատչելի դարձնելու նպատակով կազմակերպվում են տեղեկատվական սեմինարներ, էկոկրթության և էկոդաստիարակության մակարդակի բարձրացմանը նպաստող միջոցառումներ, մամուլ ասուլիսներ, շնորհանդեսներ, գործնական աշխատանքներ (ծառատունկ, տարածքի մաքրում և այլն) միջազգային էկոլոգիական տոների նշում և այլն:

2010թ. հունվար-հունիս Երևանի Օրհուս կենտրոնում կազմակերպվել է տեղեկատվության մատչելիությանը նպաստող 5 սեմինար, էկոկրթությանը և էկոդաստիարակությանը նպաստող 9 միջոցառում (շրջակա միջավայրի թեմաներով նկարչական մրցույթ, ցուցահանդեսներ, բաց դասեր և ֆիլմերի դիտումներ և այլն):

Օրհուս կենտրոններն հանդիսանում են կապող օղակ պետական և ոչ պետական մարմինների միջև: Կենտրոնները էկոլոգիական խնդիրների շուրջ կազմակերպում են կլոր սեղաններ, հանրային քննարկումներ և այլ միջոցառումներ՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ (ներկայացուցիչներ ՀՀ նախարարություններից, Մարզպետարաններից, քաղաքապետարաններից և այլ պետական օղակներից, գիտական և բիզնես սեկտորից, ՁԼՄ-ներից, ՀԿ-ներից և այլն):

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում կազմակերպվել են 7 հանրային քննարկում և կլոր սեղան, 10 աշխատանքային հանդիպումներ ՀԿ-ների, պետական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ:

ՕԿ-ների գործունեությունը նպաստում է հանրության մասնակցությունը շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների կայացմանը: Կենտրոնները շահագրգիռ հասարակությանը տեղեկացնում են շրջակա միջավայրի հարցերի շուրջ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի և

Էկոլոգիական փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ կայանալիք հասարակական լուսմների մասին և աջակցում են հասարակական լուսմների կազմակերպմանը:

Կենտրոնը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում Ազգային ժողովում մասնակցել է ՀՀ կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով փաթեթով ներկայացված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի քննարկմանը: Երևանի ՕԿ-ն մասնակցել է նաև քաղաքապետարանում կազմակերպված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ հասարակական լուսմներին:

2010թ. հունվար-հունիս ամիսներին կենտրոնի կողմից կազմակերպված միջոցառումների քանակը կազմում է 29 միջոցառում:

Կենտրոնը ակտիվ համագործակցում է շրջակա միջավայրի հարցերով զբաղվող միջազգային, պետական և ոչ պետական կառույցների, գիտական, բիզնես և ՋԼՄ սեկտորի հետ: Մասնակցում է այդ կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին, ինչպես նաև տրամադրում է տարածք կենտրոնում միջոցառումներ անցկացնելու համար:

Կենտրոնի համակարգողը մայիսի 10-ին մասնակցել է Էկոլոգիական իրավունքի կենտրոնում կազմակերպված՝ ծանուցման և հասարակայնության մասնակցության արդյունավետ գործիքների, Էկոլոգիական տեղեկատվության տարածման էլեկտրոնային միջոցների, արդարադատության մատչելիության հետ կապված հիմնախնդիրների վերաբերյալ սեմինարին և մայիսի 11-ին «Խազեր» Էկոլոգոմշակութային ՀԿ-ի կողմից կազմակերպված «Կոպենհագենից դեպի Կանկուն (Մեքսիկա)-Հայաստանը Կլիմայի փոփոխության կոնվենցիայի 16-րդ նստաշրջանի նախաշեմին» կոնֆերանսին: Կենտրոնը իր մասնակցությունն է ցուցաբերել նաև շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող մի շարք այլ քննարկումների, կլոր սեղանների, սեմինարների:

Կենտրոնի աշխատակիցները մշտական աշխատանք են իրականացնում կենտրոնի այցելուների հետ: Կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 320 մարդ, որոնցից 270-ը օգտվել է կենտրոնների ծառայությունից (գրադարան-120, տեսադարան-15, ինտերնետ-78, տպիչ-57), մնացածը տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու և այլ հարցերով:

Մշտապես համալրվում է կենտրոնի գրադարանը և ֆիլմադարանը ՄԱԿ-ի և ԵԱՀԿ գրասենյակի, ՀՀ բնապահպանության նախարարության, ՀԿ-ների և այլ կառույցների կողմից տրամադրվող նյութերի հաշվին:

Կենտրոնի գործունեությունը մանրամասն ներկայացվում է www.aarhus.am/yerevan կայքում:

Երևանի Օրիուս կենտրոնի

համակարգող

Սիլվա Այվազյան